Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
հոկտեմբերի 4 -ի N 673 - Ա որոշման

«Հայաստանի ազգային ագրարային համալսարանի լաբորատորիայի կահավորում»

Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը	«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի լաբորատորիան գնտվում է ոչ բավարար պայմաններում: Ծրագրի նպատակն է լաբորատորիան կահավորել աշխատանքի համար անհրաժեշտ գույքով:
2.	Ծրագրի բարեգործական որակավորման նպատակը	Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամ: Հասցե՝ Երևան, Ամիրյան 4/6, 5-րդ հարկ ՀՎՀՀ 02600555, հեռախոս՝098 98-99-13, 095 01-16-94
4.	Ծրագիրը կատարողը	«Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամ: Հասցե՝ Երևան, Ամիրյան 4/6, 5-րդ հարկ ՀՎՀՀ 02600555, հեռախոս՝098 98-99-13, 095 01-16-94
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ք. Երևան, Տերյան 74: Բնագավառը՝ կրթություն
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում է 11.000.000 (տասնմեկ միլիոն) դրամ: Ֆինանսավորման աղբյուրը՝ «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամ:
7.	Բարեգործություն ստացողը	«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2019 թ.-ի հոկտեմբերի 5-ից 2019 թ. հոկտեմբերի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը դիմել է ոչ բարվոք վիճակում գտնվող լաբորատորիան կահավորելու խնդրանքով: Ծրագրով նախատեսվում է ներմուծել հատուկ լաբորատորիաների համար պատրաստված 67 միավոր կահույք: Կահույքն այժմ պատրաստվում է և Հայաստան կբերվի մինչև 2019 թ.-ի հոկտեմբերի 15-ը: Կահույքի ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 11.000.000 (22.542 ԱՄՆ դոլար)
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Կահույքի գնման պայմանագիր է կնքվել «Խիմլաբոռռեակտիվ» ՍՊԸ (ООО «Химлаборреактив» Ուկրաինա, Կիև) հետ, որը կմատակարարի կահույքի ամբողջ ծավալը: Պայմանագրի գինը կազմում է 22.542 ԱՄՆ դոլար:

11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամը համագործակցում է Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Կահույքի տեղադրման և ըստ նշանակության օգտագործման վերահսկողությունը կիրականացվի «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի և աշխատակազմի կողմից: ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N66-Ն որոշմամբ հաստատված Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ ծրագրի ընթացքի և արդյունքների մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ